ՀՏԴ 336.7

Տնտեսագիտություն

Ռուզաննա ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և
կառավարմանամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Մարիա ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
ԱրՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի
Կառավարում ՄԿԾ-ի առաջին կուրսի մագիստրանտ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում դիտարկվել է մարդկային կապիտալի կուտակման և զարգացման դերը ժամանակակից տնտեսությունում, նրա մրցունակության բարձրացման գործում, հիմնավորվել մարդկային կապիտալը՝ որպես տնտեսական համակարգը նորարարական տնտեսության վերափոխելու հիմք, քննարկվել մարդկային կապիտալի արժեքիբարձրացման չափորոշիչները:
Հետազոտությունում մանրակրկիտ վերլուծվել են մարդկային կապիտալի զարգացման հիմնական բնութագրիչները. բնակչության եկամուտները (կենսամակարդակը), մարդկանց կրթության մակարդակը, մարդկանց առողջական վիճակը և կատարվել հիմնավոր եզրահանգումներ: Մարդկային զարգացման համաթվի դիտարկմամբ կատարվել են համեմատական վերլուծություններ տարբեր տարածաշրջանների և երկրների բնակչության կենսամակարդակների միջև:
Հոդվածում հաշվարկվել է մարդկային զարգացման համաթվի ցուցանիշը ԱՀ-ի համար՝ 2017-2020թթ. Կտրվածքով, վեր են հանվել երկրում մարդկային կապիտալի զարգացման և արդյունավետ օգտագործման ուղիները:
Հետազոտությունում տրվել են ԱՀ-ում մարդկային կապիտալի որակական բարելավման կոնկրետ ուղիների առաջարկներ:
Բանալի բառեր՝ մարդկային կապիտալ, մարդկային կապիտալի արժեք, մարդկային կապիտալի զարգացում, մարդկային կապիտալի որակ, համախառն ներքին արդյունք,

բնակչության 1 շնչին ընկնող եկամուտ, կյանքի միջին տևողություն, կրթության մակարդակ, մարդկանց առողջական վիճակ, ներդրումներ, կենսամակարդակ, բնակչության ծերացում, տնտեսական աճ, զարգացող երկրներ, մարդկային զարգացման համաթիվ:

Р.Мангасарян, М.Манучарян

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В РАЗВИТИИ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА

В данном статье рассматривалься роль накопления и развития человеческого капитала в современной экономике и в повышении ее конкурентоспособности, обосновываясь человеческий капитал как способ трансформации экономической системы в модернизированную экономику и дискуссирует критерии повышения ценности человеческого капитала.

В ходе исследования были тщательно проанализированы основные характеристики развития человеческого капитала: доход населения (уровень жизни), уровень образования и состояние здоровья, и были сделаны существенные выводы. Наблюдая за индексом человеческого развития, был проведен анализ между уровнем жизни населений различных регионов и стран.

В статье рассчитывается индекс человеческого развития Республики Арцах на 2017-2020 годы, выявлены пути развития и эффективного использования человеческого капитала.

В исследовании предлагаются конкретные пути повышения качества человеческого капитала в Республике Арцах.

Ключевые слова: человеческий капитал, ценность человеческого капитала, развитие человеческого капитала, качество человеческого капитала, валовой внутренний продукт, доход на душу населения, средняя продолжительность жизни, уровень образования, состояние здоровья, инвестиции, уровень жизни, старение населения, экономический рост, развивающиеся страны, индекс человеческого развития.

R. Mangasaryan, M.Manucharyan

CURRENT TRENDS IN HUMAN CAPITAL DEVELOPMENT

This article observes the role of accumulation and development of human capital in the modern economy and in raising its competitiveness, substantiates human capital as a way of transforming the economic system into a modernized economy, and discusses the criteria for increasing the value of human capital.

The principal descriptors of human capital development: population income (standard of living), level of education, and health condition were thoroughly analyzed in the research and substantial conclusions were made. By observing the human development index, comparative analysis was done on living standards between populations of diverse regions and countries.

In the article, the human development index value for the Artsakh Republic for the years 2017-2020 was evaluated, and the ways of developing and efficiently using human capital were revealed.
Concrete ways of improving the quality of human capital in the Artsakh Republic are proposed in the research.
Key words: human capital, human capital value, human capital development, human capital quality, gross domestic product, per capita income, average life duration, educational level, health condition, investments, standard of living, population aging, economic growth, developing countries, human development index.

Համաշխարհային գիտատեխնիկական ու սոցիալ-տնտեսական առաջընթացի արդի փուլի համար բնորոշ է մարդկային գործոնի դերի ու նշանակության աննախադեպ աճը տնտեսության մեջ և հասարակական կյանքում: **Մարդկային կապիտալ** (այսուհետ՝ ՄԿ) հասկացությունն արդի պայմաններում ձեռք է բերում հասարակական արտադրության առաջընթացի վճռորոշ բաղադրիչի, հետինդուստրիալ հասարակության զարգացման հիմնարար գործոնի, նրա շարժիչ ուժի նշանակություն: Իր դասական բնորոշմամբ՝ ՄԿ-ն այն գիտելիքների, հմտությունների, կարողությունների ու վարպետության ամբողջությունն է, որով օժտված է աշխատողը, և որոնք նա ձեռք է բերում ընդհանուր ու մասնագիտական կրթության, պրոֆեսիոնալ պատրաստվածության, արտադրողական փորձի շնորհիվ: Ի տարբերություն կապիտալի մյուս տեսակների, մարդկային կապիտալի օգտագործումը ենթադրում է նրա արժեքի շարունակական աճ, այլ ոչ թե մաշվածություն, քանի որ տարիների ընթացքում գիտելիքներն ու աշխատանքային հմտություններն ավելանում են: Առանց ՄԿ-ի անհնար է նորարարական տնտեսության բնականոն գործունեությունը, ընդ որում, մարդու մտավոր ունակությունները, նրա ստեղծագործական հմտություններն ու նախաձեռնողականությունը առավելագույն պահանջարկ ունեն:

Ազգաբնակչության բարեկեցության ապահովման տեսանկյունից, թերևս, էական նշանակություն չունեն առկա մարդկային ռեսուրսների քանակական ծավալները: Քիչ չեն այն ազգերն ու պետությունները, որոնք տիրապետում են թվաքանակով մեծ մարդկային ռեսուրսների, այնուհանդերձ, այդ ռեսուրսների անարդյունավետ կառավարման հետևանքով կանգնել են տնտեսական և քաղաքական լուրջ հիմնախնդիրների առջև: Կրթության, գիտության ոլորտում անհրաժեշտ և համարժեք ներդրումների իրագործման հարցում պետության և հասարակության փոխհամաձայնությամբ մշակված ռազմավարությունը հնարավորություն է տալիս առկա ՄԿ-ի կիրառությունից ակնկալել որակական հետադարձ արդյունք:

Տարիների ընթացքում այլ հավասար պայմաններում աստիճանաբար աճում է ՄԿ արժեքը: Ինչպես ընդունված է ասել՝ առողջությունն ու գիտելիքները

աշխատանքի շուկայում յուրաքանչյուր մարդու մրցունակության գրավականն են: Նշենք, որ ՀՀ-ում և ԱՀ-ում ՄԿ արժեքը բարձրացնում են նաև այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են ընտանիքների սոցիալական կարգավիճակն ու սոցիալական կապերը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Միավորված ազգերի կազմակերպությունն առաջարկել է մարդկային կապիտալի զարգացման հետևյալ բնութագրիչները.

1. բնակչության եկամուտները (կենսամակարդակը),
2. մարդկանց կրթության մակարդակը,
3. մարդկանց առողջական վիճակը:[1]

Նշենք նաև, որ յուրաքանչյուր բնութագրիչի համար առաջարկվում են համապատասխան ցուցանիշներ: Այսպես.

- Եկամտի գնահատման համար՝ երկրում բնակչության մեկ շնչի հաշվով արտադրված համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), որը բնութագրում է պատշաճ կենսամակարդակ ունենալու հնարավորությունը: Ըստ Համաշխարհային բանկի 2019թ. տվյալների՝ բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշով աշխարհում առաջատար է Մոնակոն՝ 185 741$ (2018թ.), ինչը գրեթե 3 անգամ գերազանցում է ՀՆԱ ցուցանիշով համաշխարհային առաջատար ԱՄՆ-ի համապատասխան ցուցանիշին՝ 65 281$: Համեմատության համար նշենք, որ բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշներով ՀՀ-ն (4 623$) և ԱՀ-ն տարածաշրջանում բավականին զիջում են իրենց դիրքերը, առաջատարը Ադրբեջանն է (4 794$), այնուհետև Վրաստանը (4 769$) /գծապատկեր 1/:[2]



Գծապատկեր 1. 2020թ. Անդրկովկասի երկրների բնակչության 1 շնչինը ընկնող ՀՆԱ ցուցանիշները

- Կրթության մակարդակի գնահատման համար օգտագործվում են ներքոհիշյալ երկու չափանիշների կշռված մեծությունները.

[1] http://hdr.undp.org/
[2] www.vsemirnyjbank.org

- ✓ գրագիտության մակարդակի,
- ✓ համապատասխան տարիքային խմբի բնակիչներից ուսումնական հաստատություններում ընդգրկվածների թվի:

Նշենք, որ հիշյալ չափանիշների կշռված մեծությունների (առաջինը՝ 1/3, երկրորդը՝ 2/3 գործակցով) գումարը ներկայացնում է կրթության մակարդակը երկրում:

Ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացրած տվյալների՝ կրթության մակարդակի ինդեքսով աշխարհում առաջատարը Գերմանիան է (0,943), իսկ Ասիական երկրներից՝ Իսրայելը (0.883): Անդրկովկասում կրթական մակարդակի ինդեքսը ամենաբարձրը Վրաստանում (0.862) է: Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ հիշյալ համաթվով ՀՀ-ն (0.740) Ադրբեջանի (0.711) համեմատ առաջատար է: Հաշվարկները փաստում են, որ ԱՀ-ում ցուցանիշը ունի ցածր մակարդակ՝ 0,68 (հաշվարկը տրված է աղյուսակ 3-ում) գծապատկեր 2/:[1]



Գծապատկեր 2. 2020թ. կրթության մակարդակի ինդեքսը տարբեր երկրներում

- Մարդկանց առողջության գնահատման համար հաշվարկվում է կյանքի սպասվելիք միջին տևողության ցուցանիշը: Դիտարկումները ցույց են տալիս, որ 2020թ. տվյալներովկյանքի սպասվելիք միջին տևողությամբ, աշխարհում առաջատարը Հոնկոնգն է (84.9), Եվրոպայում՝ Շվեյցարիան (83,8): Ինչ վերաբերում է մեր տարածաշրջանին, ապա հիշյալ ցուցանիշով Վրաստանի (73.8) և Ադրբեջանի (73.0) համեմատությամբ ՀՀ-ն առաջատար է (75.1): Ինչ վերաբերում է Արցախի Հանրապետությանը, ապա պատերազմի հետևանքով ցուցանիշը բավականին նվազել է և կազմել 68.9 տարի /գծապատկեր 3/:

[1] http://hdr.undp.org/

Գծապատկեր 3. Կյանքի սպասվելիք միջին տևողության պատկերը տարբեր երկրներում (տարիներով) 2020թ. դրությամբ

Դիտարկումները ցույց են տալիս, որ մարդկային կապիտալի մակարդակի թերևս ամենահայտնի անուղղակի ցուցանիշը մարդկային զարգացման ինդեքսն է, որը հաշվարկվում է Համաշխարհային բանկի կողմից: Մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ) հնարավորություն է տալիս կատարել համեմատական վերլուծություններ տարբեր տարածաշրջանների և երկրների բնակչության կենսամակարդակների միջև: Համաթիվը պարունակում է չորս պարադիգմա՝

✓ **Արտադրողականություն.** դիտվում է որպես տնտեսական աճ և արդյունավետ գործառնություններից եկամտի աճ:

✓ **Հավասարություն.** ցույց է տալիս, թե որքանով սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներ հնարավորություն ունեն օգտվելու սոցիալական բարիքներից:

✓ **Զարգացում.** ցույց է տալիս, թե ինչպես է մարդկանց մասնակցությունը սոցիալական և տնտեսական գործունեությանը նպաստում կյանքի պայմանների բարելավմանը:

✓ **Կայունություն**. ենթադրում է, որ կուտակված բարիքները ժամանակի ընթացքում չեն սպառվում, և դրանց հասանելիությունը սահմանափակված չէ:

Նշենք, որ հիշյալ պարադիգմաները թվային կերպով ներկայացնելու համար օգտագործվում են երեք ենթաինդեքսներ՝ կրթական համակարգերում ընդգրկվածություն, կյանքի սպասվող տևողություն և բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտ: Ընդ, որում ՄԶՀ հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների ներկայացրած և որոշակի համապատասխանեցում անցած տվյալները:

Այսպես, մարդկային կապիտալի զարգացման համաթիվը (ինդեքս) որոշելու համար վերը շարադրված երեք գնահատումների ցուցանիշները հաշվարկվում են ներքոհիշյալ բանաձևով.

$$ԻՄԶՀ=\frac{1}{3}(ԻԿՍՏ+ԻԿՐԹ+ԻՀՆԱ),\quad ԻԿՍՏ=\frac{Ց_{փ}-Ց_{նվ}}{Ց_{առ}-Ց_{նվ}}$$

որտեղ՝ **ԻԿՍՏ-ն** տվյալ տեսակի ինդեքսն է (օրինակ՝ կյանքի սպասվող տևողության), **Ցփ-ն՝** ցուցանիշի փաստացի ձեռքբերված մակարդակը, **Ցնվ-ն՝** ցուցանիշի ընդունված նվազագույն մակարդակը, **Ցառ-ը՝** ցուցանիշի ընդունված առավելագույն մակարդակը:[1]

ՄԶՀ-ի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշների հաստատագրված նվազագույն և առավելագույն մեծությունները տրվում են են ներքոհիշյալ աղյուսակում.

Ցուցանիշներ	Նվազագույն	Առավելագույն
Կյանքի սպասվելիք միջին տևողությունը (տարի)	25	85
Չափահասների գրագիտության մակարդակը (%)	0	100
Կրթական հաստատություններում ընդգրկվածությունը (%)	0	100
Մեկ շնչին, ընկնող իրական ՀՆԱ (դոլար)	100	40000

Աղյուսակ 1.ՄԶՀ-ի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշների ընդունված նվազագույն և առավելագույն մեծությունները

ՄԶՀ-ի փոփոխման հնարավոր միջակայքն է 0≤ԻՄԶՀ≤1: Դրա իրական մեծությունը փաստորեն նշում է այն մնացյալ ճանապարհը, որը տվյալ երկիրը պետք է անցնի՝ հասնելու մարդկային զարգացման առաջին աստիճանին: Ընդ որում՝ ՄԱԿ-ի մարդկային զարգացման ցուցանիշները 1990թ-ից ի վեր ընդգրկում են մոտ 170 երկիր, որոնք բաժանվում են երեք հիմնական՝ բարձր, միջին և ցածր զարգացման խմբերի: 2019թ. տվյալներով՝ ՀՀ-ն 170 երկրների շարքում զբաղեցնում էր 81-րդ տեղը (ՄԶՀ՝ 0,776) և տարածաշրջանում գերազանցում էր Ադրբեջանին (0,756) (գծապատկեր **4**):[2]

[1] *Human Development report, 2003, էջ. 341:*

[2] *http://hdr.undp.org/*



Գծապատկեր 4. Զարգացող երկրների ՄԶՀ ցուցանիշները 2020թ. տվյալներով

ՄԶՀ-ն և երկրի դիրքի վարկանիշը կարող են փոխվել՝ կախված ինչպես տվյալ, այնպես և այլ երկրների զարգացումներից: Հետաքրքիր է ՄԶՀ-ի վերլուծությունն ըստ բաղադրիչների, որն ակնհայտորեն ցույց է տալիս, որ տնտեսական բարգավաճման և մարդկային զարգացման միջև կապը մեխանիկական չէ: Օրինակ՝ Թայլանդի և ՀՀ-ի ՄԶՀ ցուցանիշները, 2019թ. տվյալներով, կազմում են համապատասխանաբար 0,777 և 0,776: Երկրները խիստ տարբերվում են բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով՝ հօգուտ Թայլանդի: Մյուս կողմից, «տարբերությունը» լրացվում է ՀՀ-ի զարգացած մարդկային կապիտալի հաշվին: Հետաքրքիր է նաև Սինգապուրի և ՀՀ-ի ՄԶՀ ցուցանիշների կառուցվածքի վերլուծությունը, որից փաստում ենք, որ Սինգապուրի ՄԶՀ բարձր ցուցանիշը (0.938) պայմանավորված է տնտեսության զարգացման բարձր մակարդակով (1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 59 590 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ում՝ 4 680 ԱՄՆ դոլար):[1]

Հիմք ընդունելով՝ ՄԶՀ-ի հաշվարկման համար վերը ներկայացված մեթոդաբանությունը՝ ԱՀ-ում որպես 2020թ. ՄԶՀ-ի հաշվարկ ենք օգտագործելով աղյուսակ 2-ի ցուցանիշները.[2]

[1] http://hdr.undp.org/

[2] *ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալներ:*

Ցուցանիշներ	
Կյանքի սպասվելիք միջին տևողությունը (տարի)	68,9
Գրագիտության մակարդակ	129123 մարդ
Չունեն տարրական կրթություն	10469 մարդ
Սովորողների ընդհանուր քանակը	29193 մարդ
Մշտական բնակչություն	148900
Մեկ շնչին ընկնողիրական ՀՆԱ (դոլար)	3722

Աղյուսակ 2.ՄԶՀ հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշները 2020թ.

Աղյուսակում ներկայացված ցուցանիշների հիման վրա, $I_{կՍՏ}$-ի, $I_{կրթ}$, $I_{ՀՆԱ}$-ի հաշվարկը, ներկայացված է ստորև, ինչի արդյունքում ԱՀ-ում 2020թ. ՄԶՀ-ն կազմել է 0,71.

$I_{կՍՏ}=\frac{68,9-25}{85-25} = 0.731$

$I_{կրթ} = 0,919 * \frac{2}{3} + 0,196 * \frac{1}{3} = 0,68$ ($I_{գր}$=100-($\frac{10469}{129123} * 100\%$)=91,9%; $I_{ընդ}=\frac{29193}{148900} *$ 100% = 19,6%)

$I_{ՀՆԱ} = \frac{lg3722-lg100}{lg40000-lg100} = 0,6$

$I_{ՄԶՀ}$ = (0,731 + 0,68 + 0,65) / 3 = 0,71:

Համանման ձևով ԱՀ-ում ՄԶՀ-ն հաշվարկել ենք 2017-2019թթ. կտրվածքով, որը ներկայացվում է աղյուսակ 3-ում.

Ցուցանիշներ	2017	2018	2019	2020
$I_{կստ}$	0.842	0,846	0,843	0,731
$I_{կրթ}$	0,68	0,68	0,68	0,68
$I_{ՀՆԱ}$	0,6	0,6	0,65	0,6
$I_{ՄԶՀ}$	0,7	0,71	0,72	0,71

Աղյուսակ 3. 2017-2020թթ. ՄԶՀ-ն և նրա բաղադրիչ ինդեքսները ԱՀ-ում[1]

Դիտարկումներից ակնհայտ է, որ ԱՀ-ում նվազեցման միտում է արձանագրվել $I_{կստ}$-ումն $I_{ՀՆԱ}$-ում: Կարծում ենք, որ համավարակը և լայնածավալ պատերազմը ունեցան իրենց խիստ բացասական հետևանքները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համաշխարհային տնտեսության առջև կանգնած լուրջ մարտահրավերներից է բնակչության ծերացումը: Աշխարհի բնակչության ծերացման գործընթացը կտրուկ արագացել է 2010 թվականից ի վեր: Այսպես, Համաշխարհային բանկի տվյալներով՝ 2000թ-ին աշխարհում 60 և ավելի տարիք ունեցող բնակչությունը կազմում էր 600

[1] *Հաշվարկների համար հիմք են հանդիսացել ԱՀ ԱՎԾ կողմից 2017-2020թթ. տարեգրքերը և 2015թ. մարդահամարի տվյալները:*

միլիոն մարդ, ինչը 1950 թ-ի հիշյալ տարիքային խմբի բնակչության գրեթե եռապատիկն էր (205 միլիոն մարդ): 2009թ-ին այն գերազանցեց 737 միլիոն մարդ: 2019թ. դրությամբ 65 տարեկանից բարձր աշխարհի բնակչության մասնաբաժինը ռեկորդային էր՝ 9.09%:[1]

Ընդգծենք նաև, որ աշխարհի 14 տարեկանից ցածր բնակչության մասնաբաժինը հասավ գագաթնակետին 1966թ.-ին, երբ այն կազմում էր 38%, որից հետո այն կայունորեն նվազում էր՝ 2019 թ.-ի դրությամբ հասնելով 25.65%-ի: Ինչ վերաբերում է երկրի աշխատունակ (15-64 տարեկան) բնակչության մասնաբաժնին, ապա այն իր գագաթնակետին է հասել 2014 թ.-ին՝ 65,58%, որից հետո կայունորեն նվազեց՝ 2019թ. դրությամբ հասնելով 65,25%:

ՄԱԿ-ի կանխատեսումների համաձայն, մինչ 2050թ. աշխարհի բնակչության 22%-ը լինելու է կենսաթոշակառու:

Բնակչության ծերացումը տեղի է ունենում ամբողջ աշխարհում (բացառությամբ Աֆրիկայի՝ Սահարայից հարավ). ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ զարգացող երկրներում: Ամենաերիտասարդ երկիրը Ուգանդան է, որի բնակչության շուրջ 50%-ը կազմում են մինչև 15 տարեկան երեխաները: Իսկ ամենածեր երկրների շարքում են նաև զարգացած երկրները, հանձինս Իտալիայի, Ճապոնիայի, որոնց բնակչության 20%-ը կազմում են 65 տարեկանից բարձր անձինք:

Նշենք, որ ի թիվս այլ մարտահրավերների, բնակչության ծերացումը ևս կանգնած է ԱՀ տնտեսության առջև: Այսպես, 2020թ. տվյալներով Հանրապետությունում բնակչության 20,4%-ը կազմել են կենսաթոշակառուները:[2]

Մարդկային կապիտալի վերարտադրության գործընթացում բավականին էական է նաև միգրացիայի դերը: Այն դրսևորվում է թե՛ խորությամբ, թե՛ հորիզոնական շերտերով՝ ընդունող և դոնոր երկրների համար ունենալով ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքներ: Այս բազմաշերտ ազդեցությունների ոլորտում համեմատաբար շահեկան վիճակում են հայտնվում այն երկրները, որոնց հաջողվում է մակրոտնտեսական հավասարակշիռ իրավիճակ ձևավորել զուտ միգրացիայի և մարդկային կապիտալի կուտակային արժեքի փոխառնչություններում:

Այսպես, ԱՀ-ում հետպատերազմյան ձևավորված իրավիճակը ավելի քան մտահոգիչ է և անկասկած իր բացասական ազդեցությունն է թողնում երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա: Ավելանում է արտագաղթողների թիվը, ինչը պետության և ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ի թիվս այլ պատճառների, ԱՀ-ում միգրացիայի դրդապատճառներն են շարունակում հանդիսանալ

---

[1] www.vsemirnyjbank.org

[2] *Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

աշխատանք փնտրողների մասնագիտական կարողություններին համապատասխան աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը: Ըստ էության, ՀՀ-ից և ԱՀ-ից մեկնած տղամարդկանց մեծամասնությունը երկրից հեռանում է ինչպես երկրում տիրող իրավիճակից կախված, այնպես էլ գործազրկության և նյութական դժվարություններից դրդված: Նշենք նաև, որ մինչ պատերազմը ներքին միգրացիան ԱՀ-ում հանգեցրեց գյուղական շրջանների բնակչության կենտրոնացմանը շրջկենտրոններում և մայրաքաղաքում: Կարծում ենք, որ դրա հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների, հատկապես մայրաքաղաքի միջև աշխատանքային շուկայի, կրթական հնարավորությունների, կյանքի որակի անհամաչափությունն է: Այսպես, ԱՀ-ում քաղաքային բնակչության թվաքանակի գերակայությունը բնակչության ընդհանուր թվաքանակում 1989թ. մարդահամարի արդյունքներով կազմել է 51.7%: Իսկ երկրի բնակչության 56.9%-ը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ քաղաքաբնակ էր, 43.1%-ը՝ գյուղաբնակ:[1]Վերջին յոթ տարիներին քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշռի միջին տարեկան աճը կազմել է 0.6 տոկոսային կետ: Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2009-2019թթ. քաղաքային և գյուղական բնակչության արձանագրված մասնաբաժինները միջին հաշվով կազմել են համապատասխանաբար 55% և 45%:[2] Իսկ քառասունչորսօրյա պատերազմի հետևանքով, 228 համայնքից կորցնելով 120-ը, տեղահանված բնակչության մեծամասնությունը ևս կենտրոնացվել է ք. Ստեփանակերտում, ինչը երկրում մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման տեսանկյունից, առաջացնում է լուրջ մարտահրավերներ:

Վերոհիշյալ վերլուծությունները հիմք են տալիս փաստել, որ ԱՀ-ում լուրջ հիմնախնդիր է նաև որակյալ, ինտելեկտուալ ՄԿ-i կենտրոնացումները: Որակյալ ՄԿ գերակշիռ մասը կենտրոնացած է մայրաքաղաքում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ բարձրագույն կրթօջախները Ստեփանակերտում են և, կրթությունն ավարտելով, մեծամասնությունը նախընտրում է մնալ և աշխատել մայրաքաղաքում: Մայրաքաղաքում ՄԿ-ի կենտրոնացումը պայմանավորված է նաև համեմատաբար շատ աշխատատեղերի առկայությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին ամսական աշխատավարձը ամենաբարձրը Ստեփանակերտում է (2020թ. դրությամբ կազմում էր 219 189 ՀՀ դրամ)[3], ինչը ևս մայրաքաղաքում կենտրոնանալու նախապայման է:

Ինչպես նշվել է վերը, մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն պայմաններից մեկը կրթական մակարդակի մշտական բարձրացումն է: ԱՀ

[1]www.stat-nkr.am
[2]www.stat-nkr.am
[3]www.stat-nkr.am

կառավարությունը,մինչ արցախյան վերջին պատերազմը, մի շարք միջոցառումներ է ձեռնարկել կրթությունը զարգացնելու ուղղությամբ: Վիճակագրական վերլուծությունները ցույց են տալիս, որ ԱՀ-ում կրթության և գիտության գծով պետական բյուջեից կատարված ծախսերը 2020թ-ին կազմել են 14287.4 մլն դրամ՝ գերազանցելով 2010թ. ցուցանիշը շուրջ 500 մլն դրամով: Սակայն պետք է ընդգծել, որ 2016թ-ից հետո կրթության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները պետական բյուջեում նախորդ տարիների համեմատ ցուցաբերել են նվազման միտում: Այսպես, 2019թ. պետբյուջեի միայն 12,9% էր կազմում կրթության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները, 2020թ-ին՝ 11,7%-ը: Համեմատության համար նշենք, որ հիշյալ ցուցանիշը 2015թ.կազմել էին 15,6%: ԱՀ կրթական ոլորտի ծախսերի դինամիկան 2009-2020թթ. ներկայացված է գծապատկեր 6-ում:[1]



Գծապատկեր 6. ԱՀ կրթական ոլորտի ծախսերի դինամիկան 2009-2020թթ. (հազ. դրամ)

Վերոհիշյալ վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ երկրի տնտեսությունում մարդկային կապիտալի արժեքը բարձր մակարդակի վրա պահելու համար, կարևոր են կրթության ոլորտում բավարար ներդրումները: Սակայն մարդկային կապիտալում ներդրումները մի կողմից (համեմատաբար կարճաժամկետ հատվածում) դրականորեն են անդրադառնում երկրում տնտեսական ակտիվության մակարդակի վրա, բայց, մյուս կողմից (քիչ թե շատ երկարաժամկետ հատվածում) հղի են երկրի աշխատանքային ռեսուրսների մի մասի կորստյան վտանգով: Ստացվում է, որ այդպիսի ներդրումները հենց հայրենիքում կարող են պարունակել միգրացիայի բացասական ռիսկեր, քանի որ ներկայումս գլոբալացվող համաշխարհային տնտեսության մեջ, ուղեղների

[1] *Տե՛ս ԱՀ վիճակագրական տարեգիրք 2009-2020 թթ.»*

արտահոսքին զուգահեռ, նկատելիորեն ակտիվացել է զարգացող երկրներում «էժան ճանապարհով» որակավորված աշխատուժը զարգացած երկրների տնտեսության մեջ ներքաշելու միտումը: Հաճախ զարգացող երկրներում մրցունակ մասնագիտական հմտություններով օժտված անձանց արտասահմանում առաջարկում են գրավիչ աշխատանքային և կեցության պայմաններ, ինչի արդյունքում բազմաթիվ երիտասարդ մասնագետներ լքում են իրենց հայրենիքը: Հասարակության մտավոր ներուժը, լինելով տնտեսության զարգացման կարևորագույն նախապայման, տրամաբանորեն առանցքային դերակատարություն ունի նաև երկրի ֆինանսական կապիտալի ձևավորման և կուտակման գործում: Հետևաբար, երկրից «ուղեղների արտահոսքը» զրկում է տվյալ հասարակությանը ոչ միայն արժեքավոր ՄԿ-ից և, առավել ևս՝ նրա մտավոր ռեսուրսներից, այլև նպաստում է ֆինանսական ազգային կապիտալի դուրսմղմանն արտերկիր և վերջինիս ներդրմանն այլ երկրներում: Հիշյալ հիմնախնդիրը դրսևորվում է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՀ-ում:

ԱՀ-ում մարդկային կապիտալի կայուն զարգացման կարևոր բնութագրիչներից մեկի՝ բնակչության առողջապահության հարցը գտնվում է դեռևս ոչ պատշաճ մակարդակի վրա, մանավանդ գյուղական համայնքներում: Դիտարկումները ցույց են տալիս, որ գյուղական համայնքներում չկան բժիշկներ, դեղամիջոցներ, բուժկետները ապահովված չեն որակյալ կադրերով: Առողջապահական հիմնարկները և ներուժը հիմնականում կենտրոնացված են քաղաքներում, մասնավորապես ք.Ստեփանակերտում:

Ակնհայտ է, որ հետպատերազմյան արդի իրավիճակում բնակչության առողջական վիճակի բարելավումը, մրցունակ աշխատուժի և բարձրակարգ մասնագետների պատրաստումը, տնտեսական անվտանգության ապահովման հիմնական և անհրաժեշտ գործոնն են:

ԱՀ-ում վերջին 10 տարիներին (մինչև 2020թ.) ապահովվել է տնտեսական աճ, որի միջին տարեկան ցուցանիշը կազմել է մոտ 10%: 2019թ. հունվարի դրությամբ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ԱՀ-ում կազմել է 2 մլն 307,6 հազ. ՀՀ դրամ կամ շուրջ 5 հազար ԱՄՆ դոլար, որը մոտ 3 անգամ գերազանցում էր 2009թ-ի մակարդակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ տնտեսության նման հաջողությունը հիմնականում պայմանավորված էր իրականացված շուկայական բարեփոխումներով հատկապես ֆիսկալ քաղաքականության ոլորտում: Տնտեսության զարգացման գործում նաև շատ մեծ դեր են ունեցել և շարունակում են ունենալ արտասահմանից ստացվող տրանսֆերտները: Այդուհանդերձ, չնայած նշյալ ձեռքբերումներին, երկրում տնտեսական աճը ապահովվում էր հիմնականում առանց տնտեսության արդյունավետ և հեռանկարային ոլորտների զարգացման, մասնավորապես, հանքարդյունաբերության հաշվին: Այդ առումով, անհրաժեշտություն էր առաջանում տնտեսական աճի ապահովման նոր ուղիների ներդրման, որը պետք է ուղղված լինի տնտեսության մրցունակ ճյուղերի բացահայտմանը և

արտահանելի հատվածի զարգացմանը:Նման զարգացման միտումներով ԱՀ-ում մարդկային կապիտալը կարող էր ունենալ բավարար մակարդակ և որակ: 2020թ. համավարակը, այնուհետև պատերազմը խաթարեցին ԱՀ-ում տնտեսական կայուն աճը, զգալի էին կորուստները ինչպես սոցիալ-տնտեսական ոլորտում, այնպես էլ մյուս բնագավառներում: Այսպես, 2020թ. ՀՀ-ում ՀՆԱ-ն կրճատվել է 5,95%-ով (2019թ. ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ), իսկ ԱՀ-ում՝ 22,4%-ով: ԱՀ-ում ՀՆԱ-ի մակարդակի փոփոխությունները 2007-2020թթ. տրվում են գծապատկեր 7-ում:[1]



Գծապատկեր 7. ՀՆԱ-ի փոփոխությունը ԱՀ-ում 2007-2020թթ.

Կարծում ենք՝ ձևավորված իրավիճակը լուրջ սպառնալիք է ԱՀ-ում մարդկային կապիտալի զարգացման համար, քանզի կախված է առաջին հերթին կայուն տնտեսական աճի ձեռքբերման հետ:

Ամփոփելով նշենք նաև, որ ԱՀ-ում շատ կարևոր է ՏՏ ոլորտի զարգացումը:Ներկայիս մարտահրավերների ֆոնին, ՏՏ ոլորտը տնտեսությունը վերականգնելու ամենաարդյունավետ ուղին է: ԱՀ-ում պետք է գիտակցվի մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու կարևորությունը, և ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ՝ դրա որակը բարելավելու համար: Արդյունքում կբարձրանա ինչպես երկրի բնակչության որակը, այնպես էլ նրա մրցունակությունը համաշխարհային շուկայում: Ապագայում ԱՀ տնտեսական և սոցիալական զարգացումը մեծապես կախված կլինի մարդկային կապիտալի վերարտադրության գործընթացներին հասարակության վերաբերմունքից: Այդ առումով, ԱՀ-ում ՄԿ-ի որակական բարելավման հասնելու համար առաջարկում ենք.

- ✓ կարևոր դեր հատկացնել կադրային վերապատրաստումներին,
- ✓ ավելացնել կրթության ոլորտում ներդրումները,

[1] *Տե՛ս ԱՀ վիճակագրական տարեգրքեր, 2009-2020 թթ.:*

✓ իրականացնել՝ սոցիալական և կրթական ծրագրեր ՝ ուղղված կենսամակարդակի բարձրացմանը,
✓ խրախուսել մարդկային ռեսուրսների խորհրդատվության իրականացումը,
✓ խրախուսել SS ոլորտի առաջխաղացումը, քանի որ դա կլինի այն գործոնը, ինչը կներդրվի տնտեսության տարբեր ճյուղերում և կապահովի տնտեսության արդյունավետ զարգացում:

Գրականություն

1. ԱՀ վիճակագրական տարեգրքեր 2016-2020 թթ., Ստեփանակերտ, ԱՀ ԱՎԾ, 2016-2020 թթ.,
2. ԱՀ 2015թ. մարդահամարի արդյունքները», Ստեփանակերտ, ԱՀ ԱՎԾ, 2015թ.,
3. **Ճուղուրյան Ա.Գ.**, հոդված Հյուսիսափայլ. գիտական հոդվածների ժողովածու: «Հյուսիսային համալսարան» հրատ., Երևան, 2017թ.
4. **Հովսեփյան Վ.**, «Մարդկային կապիտալի զարգացումը և տնտեսական աճը», «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2015, № 2 (17), էջ 57-64:
5. **Մարզպանյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն.**, Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը. հարցադրումներ, հարցումներ, համադրումներ, ԵՊՀ հրատ., Եր., 2016, 140 էջ:
6. **Кузьминова Я.И.,Овчаровой Л.Н.,Якобсона Л.И.**, Как увеличить человеческий капитал и его вклад в экономическое и социальное развитие, Издательский дом Высшей школы экономики, Москва, 2018.
7. www.vsemirnyjbank.org
8. www.noravank.am
9. http://hdr.undp.org/

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը: